

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

ԴԱՎԻԹ ԴԱՍՊԱՐՅԱՆ

1920-ական թվականների առաջին տարիներից հայ սովետական գրականության մեջ սկսված գրական շարժումը 1925 թ. աստիճանաբար ընկնում է նոր հունի մեջ: Հայաստանի պրոլետարական գրողների Ասոցիացիայում ճեղքվածքը վերածվում է խզման: Ասոցիացիայից հեռացած մի խումբ գրողներ լենինականում հիմնադրում են պրոլետարական գրողների «Հոկտեմբեր» միությունը: «Ինչու» անջատվեցին» հոդվածում Գ. Մահարին պարզաբանում է գրական նոր խմբակցության ստեղծման անհրաժեշտությունը. «Մենք անհրաժեշտ գտանք անջատվել մի խմբակից, որն ունի 3 տարվա տրագիկա և որը շնայած բազում վերակազմություններին ու վերավերակազմություններին, մնաց նույն կաստայական և ինքնուր խմբակցությունը: ...Մենք գտանք, որ գրական մի նոր շարժում պիտի ստեղծել, առանց մազաչափ շեղվելու պրոլետարական հաստատուն գծից... և մեզ կոչեցինք հայ բանվոր և գյուղացի գրողների «Հոկտեմբեր» միություն»¹:

Այս անջատումը վերացնում էր գրականության զարգացման գործում Ասոցիացիայի տնեցած մենաշնորհը: Մամուլում Ասոցիացիայի նախագահ Վ. Ալազանի և քարտուղար Ն. Զարյանի ստորագրությամբ տպագրվում է «Մեր պատասխանը» հոդվածը, որի մեջ ասվում է, թե Գ. Մահարին հեռացվել է հետևյալ ձևակերպմամբ. «Խ. Հ. Պրոլետարական գրողների միության ընդհանուր ժողովը միության շարքերից վտարում է Գ. Մահարուն, որպես բոսյակային ինտելիգենշիանյի ու բացարձակ ռեակցիոն տրամադրությունների երգչի (նկատի ունենալով «Տիտանիկ» կոչված բանաստեղծությունների ժողովածուն), որպես միության անբարեխիղճ ու անդիսցիպլինար անդամի»². Մեկ այլ գրության մեջ Վ. Ալազանը քիչ այլ ձևակերպումով է արձանագրում Գ. Մահարու (նաև այլոց) հեռացման փաստը. «Ապա անցկացվեց միության ոչ բանվորական անգամների մեջ գտնվող, որի հետևանքով միությունից զրկվեցին Գ. Պարիսը. էդ. Խոճիկը և Գուրգեն Մահարին (որն այդ ժամանակվա քարտուղարն էր) իր տխրահռչակ «Տիտանիկով» հանդերձ»³: Փաստն այն էր, որ Ասոցիացիան ի վիճակի չէր համախմբելու գրական ուժերը: Անջատված գրողներն ու նրանց միացած համախոհները նոր գործունեություն են սկսում: Նրանք տպագրում են այսպիսի հայտարարություն. «Հայ բանվոր և գյուղացի գրողների «Հոկտեմբեր» միությունը կազմակերպում է պրոլետգրականության շաբաթ, գրքերի էժան վաճառքով: Բացի վաճառքից, լինելու են ներկայացումներ և դիսպուտներ»⁴: Եվ ապա նույն միությունը լենինականում կազմակերպում է հետհոկտեմբերյան հայ գրականության թանգարան:

¹ «Խորհրդային Հայաստան», 5. VII. 1925:

² Նույն տեղում, 19. VII. 1925:

³ «Վիշկա», 1925, № 1, էջ 81:

⁴ «Խորհրդային Հայաստան», 23. VII. 1925:

Գրական նոր խմբակցության ամրապնդմանը նպաստեց նաև 1925 թ. Ռեկ (Բ) ԿԿ որոշումը՝ ընդունված «Կուսակցության դիժը դրականության ասպարեզում»⁵ հարցի վերաբերյալ: Ավելորդ չէ նշել, որ Գ. Մահարու «Ինչու՞ անջատվեցինք» հոդվածը «Խորհրդային Հայաստանում», տպագրվել է թերթի այն համարում, որում հրապարակվել է Կենտկոմի որոշումը («Правда»-ում որոշումը հրապարակվել էր ավելի վաղ՝ հուլիսի 1-ին և Գ. Մահարին որոշմանը նախապես կարող էր ծանոթ լինել): Կուսակցության որոշումը, ընդգծելով, որ ժողովրդի նյութական բարեկեցության վերելքի հետ աճել են նաև կուլտուրական պահանջներն ու կարիքները, նշում էր, որ «Պրոլետարական գրողների հեղինակա գեռ չկա, և կուսակցությունը պետք է օգնության գա այդ գրողներին, որպեսզի նրանք կարողանան այդ հեղինակային համար պատմական իրավունք նվաճել»⁶: Միաժամանակ որոշումը զգուշացնում է պրոլետգրողներին կոմսնապարծության գիրկը չընկնելու վտանգից և ընդհանուր ցուցում տալիս խոհեմ ու հոգատար վերաբերմունք դրսևորելու ուղեկիցների նկատմամբ: Որոշման 14-րդ կետում ասված է. «Կուսակցությունը պետք է արտահայտվի հօգուտ տարբեր խմբավորումների ու հոսանքների ազատ մրցության... նյութապես և բարոյապես օժանդակելով պրոլետարական և պրոլետարա-գյուղացիական գրականությանը և օգնելով «ուղեկիցներին», կուսակցությունը չի կարող մենաշնորհ տալ խմբակներից որևէ մեկին, մինչևիսկ իր գաղափարական բովանդակությամբ ամենապրոլետարականին»⁷: Որոշման կարևոր կետերից մեկն էլ այն էր, որ լուրջ ուշադրություն էր դարձվելու գրական վարպետության հարցերին. «...օգտագործելով հին վարպետության տեխնիկական բոլոր նվաճումները, մշակել միլիոններին հասկանալի համապատասխան ձև»⁸:

Որոշումը ազատ մրցակցության հնարավորություն էր ստեղծում: Իսկ Հայաստանում կար ընդամենը մեկ կազմակերպություն: Եվ ահա որոշման ստեղծած հնարավորությունների պայմաններում ակտիվանում է «Հոկտեմբեր» միությունը, որն, ըստ Գ. Մահարու, սաղմնավորվել էր ավելի վաղ: Հուլիսի 17-ին հրապարակվում է մի հայտարարություն, որի մեջ ասված է. «Հայ բանվոր և գյուղացի գրողների «Հոկտեմբեր» միությունը պոետ Նղիշ Զարենցին ընտրեց միության պատվավոր նախագահ»⁹: Իսկ Ն. Զարենցն այդ շրջանում գեղագիտական լուրջ վերափոխությունների ու ստեղծագործական ակտիվ աշխատանքի հետ մեկտեղ ծրագրում էր հրատարակել «Ղեկ» անունով պարբերական: Նույնիսկ «Ղեկի» բլանկի վրա Ն. Զարենցի ստորագրած գրություններով աշխատակցելու են հրավիրվում Գ. Մահարին, Մ. Արմենը¹⁰ և Սակայն «Ղեկի» հրատարակությունը չի իրագործվում:

Արտասահմանից վերադառնալուց հետո Ն. Զարենցը ստանձնում է «Հոկտեմբերի» ղեկավարությունը և անցնում կազմակերպչական լուրջ գործունեության: Հուլիսի 17-ին Գ. Մահարին գրում է. «Նրան», «Կաֆե Նաիրե»-ի Գրում էր «Նարգիլ» պապիրոսի տուփի վրա:

5 Նույն տեղում, 5. VII. 1925:

6 Նույն տեղում:

7 Նույն տեղում:

8 Նույն տեղում:

9 Նույն տեղում, 17. VII. 1925:

10 «Հիշողություններ Նղիշ Զարենցի մասին», Երևան, 1961, էջ 202:

— «Բանվորա-գյուղացիական» էսպիսի գրականություն չկա։ Պրոլետարական-վասսալամ։ Միությունը պիտի դարձնել համահայաստանյան։ Պիտի վերցնել Հայաստանի խորհրդայնացման ամիսը։— նոյեմբեր։

— Եվ էսպես, դուրս եկավ էսպես։— Հայաստանի պրոլետարական գրողների «նոյեմբեր» միություն¹¹։

Միությունը «խորհրդային Հայաստանում» հրապարակում է իր դեկլարացիան, որի տակ ստորագրել էին Ե. Չարենցը, Գ. Մահարին, Վ. Նորենցը, Մ. Արմենը, Գ. Սարյանը, Ան. Վարդանյանը, Ս. Տարոնցին, Հ. Մելիքյանը և ուրիշներ։ Ե. Չարենցը, որը դեռևս 1923 թ. գրած «Պրոլետարական գրականություն», թե խուլիգանների «գրական» արշավանք» հոգևածում պահանջում է կուսակցական վերաբերմունքի հստակեցում գրականության հարցում, Կենտկոմի 1925 թ. որոշումն ընդունում է որպես գրական գործունեության հիմք և ըստ այդմ շարադրում «նոյեմբերի» դեկլարացիան։

Դեկլարացիան նախ հիմնավորում է Ասոցիացիային զուգահեռ պրոլետարական գրական նոր խմբակցության ստեղծման անհրաժեշտությունը։ Դա ունի երկու նպատակ. առաջին՝ գրական գործի առողջացում. «Իր վարած գրական քաղաքականության անխոհեմ ու անհամբերողական, ոչ զգուշավոր ընթացքի շնորհիվ նա (Ասոցիացիան—Դ. Գ.) ջլատեց մեր պրոլետարական շարքերը և կաստայացավ։ Իսկ գրական արտադրանքի ասպարեզում նա ստեղծեց այն ջերմոցային «պրոլետարականություն», որի անընդունելիության մասին ասված է մեր կուսակցության բանաձևի 11-րդ կետում»¹², երկրորդ՝ պրոլետարական ցածրերի ուժերի համախմբում և համահայաստանյան գրական կազմակերպության ստեղծում։ «նոյեմբեր» միությունը հրապարակում է նաև իր պլատֆորմը՝ գործունեության ծրագիր ունենալով Համամիութենական պրոլետարական գրողների ասոցիացիայի (ՎԱԱՊ) բանաձևը, այն տարբերությամբ միայն, որ կար այդ բանաձևի և Կենտկոմի որոշման միջև։ Տարբերությունը երկու հարցում էր. «նոյեմբերը», ի տարբերություն ՎԱԱՊ-ի, հեգեմոնիայի հարցում ընդունում էր ոչ թե բռնի ուժը, այլ՝ ազատ ստեղծագործական մրցակցությունը և ապա՝ ուղեկիցների հանդեպ դրսևորում էր հանդուրժողական, համբերատար վերաբերմունք։

1925 թ. սեպտեմբերի 27-ին «խորհրդային Հայաստանի» խմբագրատանը բացվում է «նոյեմբեր» միության համագումարը, պատվիրակներ են հրավիրվում Երևանից, Լենինականից, Վաղարշապատից, Դիլիջանից, Լոռուց, Զանգեզուրից։ Համագումարը տևում է երկու օր։ Դարձյալ դիմենք Գ. Մահարու հուշերին.

«Խոսում էր ինքը (Ե. Չարենցը—Դ. Գ.)։

— Մեր գրականության մեջ պիտի արտացոլվի մեր երկրի, մեր ժողովրդի դեմքը, ժամանակակից մարդու հոգեբանությունը։

— Հեղափոխությունը, սոցիալիզմի կառուցումը դժուր-զուգույնով հարսանիք չի, ոնց որ պատկերացնում են մեր պոետները իրենց ոտանավորներում»¹³։

«նոյեմբերը» սկսում է մեծ գործունեություն. տպագրվում է միօրյա «նոյեմբեր» թերթը, տպագրվում են Գ. Մահարու «Երկու պոեմ», Մ. Արմենի

¹¹ Նույն տեղում, էջ 167։

¹² «խորհրդային Հայաստան», 13. IX. 1925։

¹³ «Հեղափոխություններ Երևանի Չարենցի մասին», էջ 172։

«Կոմսոմոլիա», Վ. Նորենցի «Իրիկուն», Ան. Վարդանյանի «Նախօրյակին» գրքերը: Ծավալվում է մրցակցություն «Նոյեմբերի» և Ասոցիացիայի միջև. կազմակերպվում են դասախոսություններ ու բանավեճեր: «Խորհրդային Հայաստանը» միմյանց հետևից հայտարարություններ է տպագրում, որ հոկտեմբերի 3-ին Ասոցիացիան կազմակերպում է գրական հանդես. պրոլետարական ուսուցիչական ձևերի մասին զեկուցելու է Գ. Վանանդեցին, հոկտեմբերի 5-ին «Նոյեմբերը» կազմակերպում է գրական բանավեճ. պրոլետարական գրականության ուղիների մասին դասախոսում է Ե. Չարենցը, հոկտեմբերի 11-ին Ասոցիացիան կազմակերպում է ցերեկույթ. «Չարենցը և նրա քրննադատները» նյութի մասին զեկուցում է Գ. Վանանդեցին: 1926 թ. փետրվարի 7-ին «Նոյեմբերի» նիստում Ե. Չարենցը զեկուցում է հայ հետհոկտեմբերյան գրականության տարբեր փուլերի մասին¹⁴:

«Նոյեմբեր» միությունը, հատկապես Ե. Չարենցը, կարևոր գործ են կատարում դրական երիտասարդության ձևավորման և զարգացման գործում: Ե. Չարենցը նպաստում է ոչ միայն նրանց գրքերի տպագրությանը և գրական հեղինակության ձեռքբերմանը, այլև գրախոսում է Վ. Նորենցի, Մ. Արմենի գրքերը՝ ստեղծագործական ճիշտ ուղու վրա դնելով նրանց գրական զարգացումը:

Ի տարբերություն Ասոցիացիայի շուրջ համախմբված գրողների, նոյեմբերականները կարևոր ուշադրություն էին դարձնում նաև գրականության առաջնային հարցին՝ գեղարվեստական որակին: Այդ գործում մեծ դեր ունեն Ե. Չարենցը, որն արտասահմանից վերադարձավ դասական արվեստի արժանիքների խոր գիտակցումով: Այս առումով ուշագրավ մի փաստաթուղթ է Բեռլինից «Վիշկայի» խմբագրությանը Ե. Չարենցի գրած նամակը, որի մեջ նա, քննադատելով իր և մյուսների սխալները, դարաշրջանի ոգին արտացոլող մնայուն գործեր ստեղծելու պահանջ է առաջադրում: «Իսկ մենք ի՞նչ էինք անում:— Կարծում էինք աշխարհը նվաճել պլակատներով և ողորմելի ագիտականերով, որոնք շատ-շատ կարող են ունենալ ընթացիկ ռեկլամի նշանակություն»¹⁵: Այս կողմնորոշման տեսական-գեղարվեստական մարմնավորման օրինակ է «Պոեմ հերոսականը».

Լեֆյան թմբուկը թողած մի կողմ
Հատվող տողերը նետելով դեն,
Կրկին խրթին մի խոր դողով
Առնում եմ յամբ ես ու քողաղոտ,
Որ մեր պայքարը քնարերգեմ¹⁶:

Պրոլետարական գրական շարժումը առաջ է ընթանում երկու հունով: Ընդհանուր նպատակի ձգտող բազմակողմանիությունը խրախուսվում է նաև պետականորեն: 1926 թ. հրապարակվում է ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բանաձևը, որի 7-րդ կետը ձևակերպված էր այսպես. «Մասնավորապես Հայաստանում գրական երկու պրոլետարական կազմակերպությունների զուգընթաց գոյությունը («ՀՊԳԱ և «ՀՊԳ Նոյեմբեր» միությունները) ներկա մոմենտին պետք է միանգամայն նորմալ երևույթ համարել, որ պահանջում է կուսակցության զգուշա-

¹⁴ «Խորհրդային Հայաստան», 12. II, 1926:

¹⁵ Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1967, էջ 425—426:

¹⁶ Նույն տեղում, հ. 2, Երևան, 1963, էջ 227:

վոր վերաբերմունքը և ճկուն ղեկավարությունը¹⁷։ Իսկ 5-րդ կետում ասվում էր. «Տեսականորեն սխալ և գործնականորեն անթույլատրելի է սահմանափակել «Պրոլետարական գրականություն» հասկացությունը՝ պրոլետարական գրողների կազմակերպություն անվանվող այս կամ այն գոյություն ունեցող (կամ՝ հնարավոր) կազմակերպություններով ու սրանց ներկայացրած ուղղութիւնով»¹⁸։

Աստիճանաբար ձևավորվում և անհրաժեշտություն է դառնում գրական առանձին միավորումներն ի մի բերելու խնդիրը և տարեվերջին արդեն հարց է դրվում միաձուլելու «Նոյեմբերին» ու Ասոցիացիան։ Դեռևս 1926 թ. մայիսի 7-ին Թիֆլիսում կարդացած «Պրոլետարական գրականության խղիները» դասախոսության մեջ Ե. Չարենցը նշում էր. «Այժմս պրոլետգրական այդ երկու խմբակցությունների մեջ խոշոր տարաձայնություններ չկան և հավանորեն շատ մոտ ապագայում նրանք միանան և կազմեն մի միասնական գրական ֆրոնտ, որի համար արդեն բանակցություններ են վարվում»¹⁹։ Տարաձայնությունների վերացման մասին խոսվում է նաև «Նոյեմբերի» համահայաստանյան կազմակերպչական ժողովում, ուր ասվում է, որ հեղեմոնիայի և ուղեկիցների հարցում իրենց և Ասոցիացիայի միջև տարաձայնություններ չկան²⁰։ Միավորման հարցը դրվում է նաև «Նոյեմբերի» կենտրոնական խորհրդի ընդլայնված նիստում, իսկ դեկտեմբերի 21—23-ը տեղի ունեցած Ասոցիացիայի և «Նոյեմբերի» միացյալ կոնֆերենցիայում լուծվում է այդ հարցն ու ստեղծվում է «Խորհրդային Հայաստանի պրոլետարական գրողների միություն»։ Կոնֆերենցիային մասնակցում և ելույթ են ունենում նաև ուղեկից գրողները՝ ներկայացուցիչները (Գ. Դեմիրճյան, Զ. Եսայան)։

«Նոյեմբերի» և Ասոցիացիայի միավորման խորհրդանշական դրսևորումըն էր «Պրոլետարական գրողներ» ժողովածուն (1927), որը նախապես ծրագրված երկու տարբեր գիրք է մեկ կազմի մեջ։ Ասոցիացիայի բանաստեղծները (Հ. Հակոբյան, Վ. Ալազան, Արաքս, Ա. Վշտունի, Անուշ, Գ. Աբով, Հ. Մերկյան, Վ. Գրիգորյան, Սարմեն, Վ. Հովսեփյան, Խնկո Ապեր, Ն. Զարյան) Գ. Վանանդեցու առաջաբանով տպագրվել են առանձին, իսկ «Նոյեմբեր» միության անդամներն իրենց նախաբանով՝ առանձին (Ե. Չարենց, Դ. Մահարի, Մ. Արմեն, Վ. Նորենց, Ս. Տարոնցի, Խ. Ռադիո, Հ. Մելիքյան, Բ. Շիրակունի)։ Խիստ ուշագրավ է «Նոյեմբերի» նախաբանը, որը, կարծես, «Մուրճ» ամսագրի 1922 թ. № 1-ի մասին գրված հոդվածում Ալ. Մյասնիկյանի արտահայտած մտքերի շարունակությունը լինի²¹։ Նախաբանում գրված է. «Առաջինը, որ նկատվում է մեր միության անդամների գրվածքների մեջ, դա երկիրն է, այն երկիրը, ուր ապրում և ստեղծագործում է գրողը։ ...Գրել գյուղի մասին այնպես, որ երևա, թե այդ գյուղը Հայաստանի գյուղն է։ Գրել բանվորի, գործարանի, ինդուստրիայի մասին այնպես, որ պարզորոշ կերպով նկատվի Հայաստանի բանվորը, գործարանը, ինդուստրիան»²²։ Նախկին Նոյեմբերականներն իրենց ստեղծագործական կողմնորոշմամբ հակադրվում

17 «Խորհրդային Հայաստան», 13. VI. 1926.

18 Նույն տեղում։

19 «Մարտակոչ», 13. V. 1926.

20 «Խորհրդային Հայաստան», 27. IX. 1925.

21 Նույն տեղում, 1, 2. XII. 1922.

22 «Պրոլետարական գրողներ», 1927, Երևան, էջ 232—233.

են անկոնկրետ ու վերացական տիեզերական պոեզիային և փորձում ստեղծագործությունների նյութը վերցնել իրենց շրջապատից ու պահպանել այդ շրջապատի տիպական կոլորիտը: Այս առումով ուշագրավ է Գ. Մահարու «Բարդիներ» շարքը, որից առանձնանում են «Երկիր» և «Քառասունը» բանաստեղծությունները: Ահա մի քանի տուն առաջինից.

Ես ինձ երգում եմ քո մեջ, երկիր,
Իսկ քեզ անկաշկանդ իմ հուզերում,
Եվ դրանից չէ՞, որ իմ երգը
Այսքան հորդուն է և հորձանուտ:
...Հիվանդ է հոգիս քո ցավերով
Երկաթի՝ սերը տանջում է քեզ,
Կարոտս խորն է ու ավերող,
Իսկ քո թևերը աթար ու դեզ...
Դեռ գորշ գյուղերն են քեզ գուրգուրում,
Ախ, այդ թախծն է ինձ օղակել
Ահա թե ինչու իմ երգերը
Ձեն կարող բարձր աղաղակել...
Ես շղթաված եմ քո ներկային
Երկիր հյուղերի, սեր իմ վառման,
Խանդող սայլերին քո երկանիվ,
Քո գրին, հողին ու քո գարնան...²³:

Երկրի ու միջավայրի կոնկրետ զգացողությունն իշխում էր նաև մյուս նախկին նույնաբերականների գործերում, որոնք աշխատեցին հետազայում ևս հավատարիմ մնալ այդ գծին: Այս առումով, ժամանակի գրական պահանջների և ստեղծագործական լիարժեքության տեսակետից, առանձնանում են Ն. Ջարենցի «Երեանի ուղղիչ տնից» վիպակը և «Խմբապետ Շավարշը» պոեմը:

Քննվող ժամանակաշրջանում գրականության որակական անհրաժեշտության մասին ծավալված խոսակցություններում, բանավեճերում լուրջ կողմնորոշմամբ դարձյալ աչքի են ընկնում նույնաբերականները: Առանձնակի արժեք ունի Գ. Մահարու հոգվածներից մեկը, որի մեջ նա, բանավիճելով Վ. Ալազանի հետ, գրում էր. «Մինչև ե՞րբ ինքնաթմբակահարության, 1927 թիվն է, ընկեր Ալազան, ո՞ւր են մեր վաստակները, մեր կշռի բարձրացումը, կշիռն ո՞ւր է... Ինչո՞ւ ենք մենք կարծում, որ պրոլետարիատին հարկավոր է ինչ որ խրկորդ տեսակի արվեստ, ինչո՞ւ մեր ապաշնորհությունը փաթթել պրոլետարիատի վզին... Մարդը, ժամանակակից առաջավոր մարդն իր ապրումներով, հաղթանակներով և պարտություններով բախում է գրականության դարպասը, ներս առնող չկա... Լինենք ավելի մոտ կյանքին, հեղափոխության և մարդուն...»²⁴:

²³ Նույն տեղում, էջ 246—247:

²⁴ «Խորհրդային Հայաստան», 1. VIII. 1927: Այս բանավեճը սկիզբ է առնում Ս. Խանսյանի «Գրական խոհեր» հոդվածից (№ 156) և լայն ընդգրկում ստանում: Բանավեճին մասնակցում են նաև Վ. Ալազանը (№ 165), Ա. Վշտունին (№ 175), որը Գ. Մահարուն անվանում է «եսենիականության հայկական խրտվիլակ...», զինետների և բոսյակության գոտանք, ի. Արմենը (№ 180) և ուրիշներ: Մ. Արմենը գրում էր. «...բոլորը հավաքվել են պրոլետարականու-

1927 թ. օգոստոսից ԽՀՊԳՄ սկսում է հրատարակել իր օրգանը՝ «Գրական դիրքերում» ամսագիրը, որն իր գլխավոր խնդիրներից մեկը դարձնում է ստեղծվող գրականության գեղարվեստական մակարդակի ապահովումը։ Ամսագրի «Մեր խնդիրները» առաջնորդողում դրված է. «Այսօր մենք մեր գրողի վրա գրում ենք—«Մերը, բայց՝ լավը»²⁵։ Այս կողմնորոշումը, լինելով կենսական 1925 թ. որոշման անմիջական արտահայտությունը, ուղղված էր դեռևս մինչև պրոլետգրողների համամիութենական առաջին կոնֆերենցիան (1925 թ., 6—11 հունվարի) պահպանվող՝ «թեկուզ երեք փսլնքոտ, բայց մերը» վերաբերմունքի դեմ։ Ժամանակին Դ. Բեդնու «Պրոլետարական գրականության մասին» զեկուցման առիթով, որի մեջ արտահայտված էին այդ և այլ համամասն դատողություններ, հանդես եկավ «Պրավդան» և իր անհամաձայնությունը հայտնեց զեկուցման որոշ դրույթների վերաբերյալ։ «Պրավդայի» ելույթի 3-րդ կետում ասված է. «Պրոլետարական հպարտությունը», որը արտահայտվում է այն ֆորմուլայով, թե՛ «թեկուզ երեք փսլնքոտ, բայց մերը» և բոլոր մնացածներին սպիտակ գվարդիականների դասն է դասում»,— այժմյան պայմաններում զարմանալիորեն հիշեցնում է «կոմսնապուրժուկությունը», որի դեմ այնպես անողոր հարձակվում էր ընկ. Լենինը։ Մենք այնքան ենք հասունացել, որ, կարծում ենք, ժամանակն է, որպեսզի մեր փսլնքը սրբել սովորենք»²⁶։ Եվ ահա, «Գրական դիրքերում» ամսագիրը աշխատում է վարել հասունացած գեղարվեստական պահանջներին վայել գրական քաղաքականություն։

Ամսագիրը, թեև աշխատում է ներքին խմբակային տարաձայնությունները վերացնել և իր քննադատական սլաքն ուղղել հիմնականում արտաքին թշնամիների ու գաղափարական հակառակորդների դեմ, այնուամենայնիվ չի կարողանում լրիվ խուսափել գրական հին սովորություններից։ Ամսագիրը Ասոցիացիայի գիրքերից (որը, ըստ էության, նրանց ձեռքին էր. այդ է վկայում խմբագրական կոլեգիայի կազմը՝ Վ. Ալազան, Ն. Զարյան, Գ. Վանանդեցի)։ 1928 թ. պատասխանատու խմբագիր է նշանակվում Ն. Դաբաղյանը)՝

թյան դրողի տակ, հավաքվել են ձևականորեն, և ըստ էության կապ չունեն իրար հետ։ Այնուհետև կրկին հանդես է դալիս Վ. Ալազանը (№ 191) և վիճում Մ. Արմենի ու պետհրատի վարիչ Սնարի հետ, Գ. Վանանդեցին ազգայնականության մեջ է մեղադրում Ե. Զարենցին (№ 294)։ Բաքվի «Կոմունիստում» (1928, № 3) օբյեկտիվ քննադատության պահանջներով իր ձայնն է բարձրացնում Ե. Զարենցը։ Նրա դեմ հանդես է գալիս Ա. Վշտունին («Խորհրդային Հայաստան», 1928, № 6)։ Նույն թերթի № 7-ում տպագրվում է ՀՊԳ կենտրոնական փարչության նախկը, որը պաշտպանության տակ առնելով Ն. Զարյանին, Ա. Վշտունին, Գ. Վանանդեցուն և Ն. Դաբաղյանին՝ խիստ քննադատության է ենթարկում Հ. Աուրխաթյանին և նրա հովանավորյալներին։ Այս նյութերը ցույց են տալիս, որ նախկին տարաձայնությունները ոչ թե՛ հարթվում են, այլ ավելի խորանում։ Հարցը լուծվում է 1928 թ. հունվարի 19-ին Թիֆլիսում բացված պրոլետարական գրողների անդրկովկասյան առաջին համագումարում։ «Խորհրդային Հայաստանում» (№ 23) տպագրվում է ՎԱՊՊ-ի Վրաստանի պրոլետգրողների Ասոցիացիայի, ՎՊԳԱ հայկական սեկցիայի և ԽՀՊԳՄ-ի բանաձևը՝ «Հայ պրոլետգրողների տարաձայնությունները վերացած» վերնագրով։ Բանաձևը քննադատում է խմբակային պայքարի սխալները և Ե. Զարենցին, Ա. Բակունցին աղատում քաղաքական անհիմն մեղադրանքների բանադրանքից։ Այս բանաձևից հետո խմբակային պայքարը որոշ ժամանակ մեղմվում է և պայքարի սլաքն ուղղվում է գաղափարական արտաքին թշնամիների դեմ։

²⁵ «Գրական դիրքերում», 1927, 1, էջ 3։

²⁶ «Խորհրդային Հայաստան», 25. I. 1925։

շարունակում է հալածել նոյնմբերականներին²⁷։ Այս միտումներին իրավացի հակահարված է տալիս Հ. Սուրխաթյանը։ «Ծիշտ քննադատելու... պրոբլեմը» հողվածում նա գրում է. «Ն. Դաբալյանի «համեստ» նպատակը եղել է հետևյալը. ա) Չարենցին դուրս բերել մանր բուրժուական գրող, 100 տոկոս ժրտելով նրա պրոլետարական-հեղափոխական ստեղծագործությունները. բ) վշտունում և Ն. Ջարյանին դուրս բերել իսկական, օրթոդոքս պրոլետգրողներ, 100 տոկոս ժրտելով նրանց մանր-բուրժուական սայթաքումները։

Ինչ ուղում եք ասեք, բայց մեր հետհոկտեմբերյան գրականությունը մաղելուց հետո՝ պրոլետարական-հեղափոխական գրական արժեքների ամենամեծ տոկոսը վերջ է վերջո կազմելու են դարձյալ Չարենցի պրոլետարական գործերը²⁸։ Հ. Սուրխաթյանի հողվածի առթիվ հանդես է գալիս Գ. Վանանդեցին («Ազգային խանձարուրի» և պրոլետարական դրոշակի միջև) և Ն. Չարենցին ու Գ. Մահարուն մեղադրում գրականության զարգացումը ազգային հիմքի վրա տեղափոխելու համար²⁹։

Գրական հասունացող շարժումը օրակարգի հարց է դարձնում գրականության մեջ մարդուն կենդանի նկարագրով ու հոգեբանական խորությամբ պատկերելու հարցը. «Մեզանում, պրոլետարական գրականության զարգացման ներկա շրջանում, յուրաքանչյուր պրոլետգրողից պահանջվում է, որ պեսդի նա իր ստեղծագործություններում գեղարվեստական կոնկրետ արտահայտություններով ու ձևերով տա կենդանի ու իրական մարդը, հատկապես ուշադրություն դարձնելով նրա տիպականացման և նրա հոգեբանական վերլուծման վրա»³⁰։ Տեսականորեն հասունանում և աստիճանաբար ուսուցողական գեղարվեստորեն իրագործվում է մարդկային խոր պահանջների դիրքերից գրականություն ստեղծելու խնդիրը։

Ստեղծագործական-գաղափարական շարժումն առաջ է ընթանում՝ աստիճանաբար լուծելով նաև կազմակերպչական նոր խնդիրներ։

1929 թ. հունվարից սկսում է լույս տեսնել «Նոր ուղի» ամսագիրը, որը նպատակ է դնում պրոլետարական աշխատավորական գրողների հետ մեկտեղ «համախմբելու իր շուրջը խորհրդային ինտելիգենցիայի, մեր գիտական գրական ու գեղարվեստական ուժերի լավագույն ներկայացուցիչներին»³¹։ Պատահական չէ, որ ամսագրում իրար կողքի երևան են գալիս Հ. Թումանյանի ու Ա. Իսահակյանի, Ա. Շիրվանզադեի ու Վ. Թոթովենցի, Ն. Չարենցի ու Ա. Բակունցի, Ստ. Ջորյանի ու Դ. Դեմիրճյանի, Գ. Մահարու ու Ն. Ջարյանի անունները։

Գրական ուժերի համախմբման միտումը դառնում է նաև կազմակերպչական հարց։ 1929 թ. ապրիլի 29-ին տեղի է ունենում Պրոլետարական գրողների և Աշխատավորական գրողների (որ ուղեկիցներն էին) ֆեդերացիայի հանդիսավոր բացումը։ Սակայն դա ըստ էության ձևական ֆեդերացիա էր և ընդհանուր գրական կազմակերպություն դեռևս չի ստեղծվում։ Բացի ալդ, առանձին է մնում հայ գրական ընկերությունը, որը համարվում էր ազգայ-

²⁷ «Գրական դիրքերում» ամսագրի էջերում քննադատության են ենթարկվում Ն. Չարենցը (1927, № 3—4), Գ. Մահարին (1929, № 10)։

²⁸ «Պրոլետար», 16. X. 1927։

²⁹ «Գրական դիրքերում», 1927, № 5։

³⁰ Նույն տեղում, 1928, № 7—8, էջ 47։

³¹ «Նոր ուղի», 1929, № 1, էջ 5։

նական: Նորաստեղծ ֆեդերացիան հրապարակում է իր գործունեության ծրագիրը՝ դեկլարացիան, որի մեջ ասված է. «Ֆեդերացիան ստեղծագործական խնդիրներում կանգնելով պրոլետարական ռեալիզմի տեսակետի վրա, պայքարելով գրական սխեմատիզմի արտահայտությունների դեմ, իրեն նպատակ է դնում տալ կենդանի մարդու գեղարվեստական պատկերացումը»³²: Ֆեդերացիան ըստ էության որդեգրում է ճիշտ կողմնորոշում, որը, սակայն, դժվարությամբ է հարթում իր ճանապարհը:

20-ական թվականների վերջերին գեղարվեստական դրականության վերականգնման պահանջ է զգացվում: Ավելի ու ավելի են առաջադրվում ստեղծագործական խնդիրներ թե՛ մեզանում և թե՛ միութենական գրականության մեջ: Պրոլետարոզների ասոցիացիաների համամիութենական միավորման (ՎՕԱՊՊ) քարտուղար Ա. Սելվինսկին «Պրոլետարական պոեզիան բեկման ճանապարհին» հոդվածում պոեզիայի ընթացիկ վիճակը համարելով ճգնաժամային («Մենք հանդիպում ենք հատկապես ճգնաժամի և ոչ անշարժության»), արձանագրում է այն փաստը, որ զգալիորեն «թուլացել է հասարակական ուշադրությունը» պոեզիայի հանդեպ, որ «մեր բանաստեղծական կադրերի կուլտուրական հետամնացությունը ցնցիչ է»: Փաստերի տրամաբանությունը նրան մղում է հետևյալ եզրակացության. «Բացակայում է սլարգ պատկերացում պրոլետարական պոեզիայի զարգացման ուղիների» վերաբերյալ: Այս ելակետից նա հարց է բարձրացնում լայնորեն առաջադրելու «պրոլետարական պոեզիայի ստեղծագործական մեթոդի հարցերը»³³: Դրանց պատասխանն էր 1930 թ. հունվարի սկզբին հրապարակի վրա գտնվող Ե. Չարենցի «էպիբական լուսաբաց» ժողովածուն, որի մեջ բանաստեղծը միաժամանակ և՛ առաջադրում էր ընթացիկ գրականության տեսական ծրագիրը, և՛ կոնկրետ գեղարվեստական ձևակերպում տալիս այդ տեսությանը: Այդ գրքով Ե. Չարենցը հայտնաբերում է գրականության զարգացման ռեալիստական ուղին և զարմանալի բազմակողմանիությամբ ու հաստատուն լրջությամբ լուծում ստեղծագործական մեթոդի և դասական ավանդույթների՝ ստեղծագործական յուրացման, գեղարվեստական խոսքի հասարակական-քաղաքացիական արժեքի ու պատմականության, գրականության նյութի ու իրականության գեղարվեստական վերարտադրման, գրական ժանրերի ու պատումի ոճի, լեզվի ու տաղաչափության, բանաստեղծության կառուցվածքի ու պատկերային ատաղձի և շատ ու շատ այլ հարցեր: Ամբողջ գիրքն իր տեսական հիմքով ու գեղարվեստական արժեքով ուղղված էր սխեմատիզմի դեմ:

Եվ ի՞նչ... այս բոլր, այս կենդանի
Հույզերը հորդ երգելու տեղ—
Միաշքանի, միոտանի
Մարդն են երգում հիմա անթև.
Մարդն են երգում, որի կրծքում,
Երգեհոն է դրված կարծես,
Որ ճիշեր է միայն փղձկում,
Չունի ո՛չ խանդ, ո՛չ խինդ, ո՛չ սեր³⁴:

³² «Խորհրդային Հայաստան», 1. V. 1929.

³³ «Գրական դիրքերում», 1930, № 5, էջ 32—53.

³⁴ Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1968, էջ 29.

Սխեմատիզմի հաղթահարումը դարձել էր օրվա պահանջ։ Ստեղծված վիճակից ելք որոնելու ցանկությամբ էին համակված դրեթե բոլոր հայ գրողներն ու քննադատները։ Դեռևս 1929 թ. վերջերին տպագրվում է Վ. Ալազանի «Գրական խնդիրներ» հոդվածը, որի մեջ նա զարմանալի շրջադարձով քննադատում է «սխեմատիզմի կմախքը» և ապա հայտարարում. «Ամբողջ երկսույզ դեպի ստեղծագործական խնդիրները։ Կորչի ինքնանպատակ կազմակերպչականությունը»³⁵։

1930 թ. սկզբին տպագրվում է Ստ. Զորյանի «Քննադատը, գրողը և հարակից խնդիրները» ծանրակշիռ հոդվածը, որի մեջ նա ուշադրություն էր հրավիրում գրական կուլտուրայի պակասի և որակյալ գրականություն ստեղծելու անհրաժեշտության վրա։ «Մեր հեղափոխության կյանքը,—գրում է հեղինակը,— նրա առաջադրած խնդիրները պետք է պատկերել ու երգել ոչ թե պլակատային ներկերով ու ճիշերով, քաղաքագիտական թեզ բարձրացնելով (դրանք ժամանակին կարևոր էին, բայց դրանց ժամանակն անցավ), այլ խոր, հոգեբանական, կենցաղային ռեալիստական գրվածքներով։ Մանավանդ գեղարվեստորեն գրված։ ...Այսօր գրականությունը... չունի (մեծ մասով) և տեղական առանձնահատկություն, տեղական բույր ու գույն... Շատ գրվածքներ թարգմանության տպավորություն են թողնում»³⁶։

Սխեմատիզմի հարցերի շուրջ տպագրվում է Հ. Գյուլիքեվիսյանի «Գեղարվեստական գրականության հիմնական խնդիրները»³⁷ և «Դարձյալ սխեմատիզմի մասին»³⁸ հոդվածները։ Քիչ ուշ Գ. Վանանդեցու հոդվածի առիթով պատասխան հոդված է տպագրում Հ. Գյուլիքեվիսյանը՝ «Նորից գրական սխեմատիզմի և հարակից խնդիրների մասին»³⁹։

1930 թ. «Գրական դիրքերում» և «Նոր ուղի» ամսագրերի հունիսյան համարներում լայն խոսակցություն է ծավալվում պոեզիայի ստեղծագործական մեթոդի, զարգացման ուղիների, դասական ավանդույթների օգտագործման, որակի բարձրացման և այլ հարցերի մասին։ Հիմնական խնդիրը համարվում էր սխեմատիզմի հաղթահարումը։ «Գրական դիրքերում» ամսագրի կազմակերպած բանավեճի ներածական խոսքում Գ. Վանանդեցին ասում էր. «Մեր պոեզիայում վերջնականապես դեռ չի հաղթահարված մեքենայի կուլտը... Նրգվում է մեքենան, երգվում է ինդուստրիան. բայց չի երևում մարդը»⁴⁰։ Սխեմատիզմի հաղթահարման և մաքուր, ճշմարիտ գրականություն ստեղծելու տեսակետից առանձնանում է Գ. Մահարու հոդված-նամակը, որի մեջ նա, առաջնորդվելով շարենցյան կողմնորոշմամբ, առաջ է քաշում իրականության խոր յուրացման շատ կենսական հարցեր. «Մոտենանք մեր օրերի պրոբլեմներին ոչ թե քաղաքագիտական գրքերից ու մատյաններից ծծած «մտքերով», այլ մեր զգացմունքներով, այնպես, ինչպես նրանք կան և զարգանում են գիլելկտիկորեն ժամանակի հետ, առանց արհեստական թախիծների ստեղծելու և առանց հորթային հրճվանքով արջի ծառայություն մատուցելու մեր ստեղծվող պայծառ գրականության...»⁴¹։

³⁵ «Խորհրդային Հայաստան», 11. XII. 1929.

³⁶ Նույն տեղում, 26. I. 1930.

³⁷ Նույն տեղում, 8. IV. 1930.

³⁸ «Նոր զուգ», 1930, № 4—5.

³⁹ «Գրական դիրքերում», 1930, № 3—9.

⁴⁰ Նույն տեղում, № 6, էջ 33.

⁴¹ Նույն տեղում, էջ 54.

Սխեմատիզմի հաղթահարման և դասական ավանդույթների ոգով պոեզիան վերակառուցելու հարցերին են անդրադառնում նաև Դ. Դեմիրճյանը, Ս. Տարոնցին, Վ. Գրիգորյանը, Վ. Ալազանը, Վ. Նորենցը:

Գրեթե նույն հարցերն են արծարծվում նաև Վ. Թերզիբաշյանի՝ «Պոեզիայի, ստեղծագործական մեթոդի և ժանրի մասին» և Ը. Վահանյանի «Ճշգրտաժամ է ապրում արդյոք մեր պոեզիան» հոդվածներում⁴², Վ. Թերզիբաշյանը ընթացիկ գրականության մեջ ուրվագծում էր երկու ոճական ուղղություն. Ս. Զարենցի «էպիքական լուսաբացի» բաց արած հունը, որը նա համարում էր «չափազանց նշանակալից երևույթ և ստեղծագործական խոշոր նվաճում»⁴³ և ապա՝ արևմտահայ պոեզիայի ավանդույթների յուրացման միտումը:

Մեկ տասնամյակ տեղ գրական շարժումը 20-ական թվականների վերջերին իր առջև դնում է լուրջ, բարդ ու բազմակողմանի խնդիրներ և փորձում գեղարվեստորեն իրագործել դրանք: Գրականության զարգացման գլխավոր հունն արդեն հայտնաբերված էր. տասը տարվա որոնումներից հետո «էպիքական լուսաբացով» ճշտվեց այն ուղին, որով պետք է զարգանար (և զարգացավ) սովետահայ պոեզիան:

Երկրի վերակառուցման շրջանում վերակառուցման փուլ է ապրում նաև ամբողջ գրականությունը: Վերակառուցումը տեղի է ունենում և՛ ստեղծագործական կողմնորոշման մեջ, և՛ կազմակերպչական գործում: 1932 թ. փետրվարի 28-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմը որոշում է ընդունում ՀՊ Ասոցիացիայի վերաբերյալ, ուր ասված է. «Պրոլետգրականությունը դեռ մինչև այժմ չի կարողացել գեղարվեստորեն արտացոլել մեր պայքարն ու շինարարությունն իր ամբողջ ծավալով և խորությամբ» և որ ՀՊԳԱ անդամների մեջ առկա է «անսկզբունք խմբակայնություն» ու «վարչարարություն»⁴⁴: Ահա այսպիսի պայմաններում, որ ոչ միայն տեղական երևույթ էր, այլև՝ համամիութենական, 1932 թ. ապրիլի 23-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմը որոշում է ընդունում «Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին», որով լուծարքի են ենթարկվում պրոլետարական գրողների ասոցիացիաները (ՎՕԱՊՊ, ՌԱՊՊ, ՌԱՄՊ) և ստեղծվում է սովետական գրողների միություն: Այս որոշման հիման վրա մայիսի 9-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմը որոշում է ընդունում «Հայաստանի գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին», որի մեջ ասված է. «...զարգացման ներկա շրջանում պրոլետգրականության և արվեստի գոյություն ունեցող կազմակերպությունների շրջանակներն յարդեն իսկ նեղ են դառնում և արգելակում են գրական-գեղարվեստական ստեղծագործության նոր թափի ծավալմանը»⁴⁵: Որոշվում է լուծարքի ենթարկել ՀՊԳԱ-ն ու Հայաստանի գրողների ֆեդերացիան և ստեղծել Հայաստանի խորհրդային գրողների միություն, որի կազմակերպման համար գրական տարբեր նախասիրությունների տեր գրողներից ստեղծվում է առանձին հանձնաժողով:

20-ական թվականների առաջին տարիներից սկսած և այդ տասնամյակի երկրորդ կեսին զարգացման նոր փուլ թևակոխած գրական շարժումը 30-ական թվականների սկզբին տեսական-ծրագրային և կազմակերպչական հար-

⁴² «Նոր ուղի», 1930, № 6—7:

⁴³ Նույն տեղում, էջ 113:

⁴⁴ «Գրական դիրքերում», 1932, № 3, էջ 7:

⁴⁵ «Գրական թերթ», 20. V, 1932:

ցերի անսակեաից հաղթահարում է որոնումների ուղին: Բազմաթիվ խնդրանքներ միավորվում են խորհրդային գրողների միության մեջ, իսկ նոր պրակտիկայի տեսական-ծրագրային հարցերը զարգանում սոցիալիստական ուղիով մեթոդի ուղենշային կողմնորոշմամբ:

СОВЕТСКОЕ АРМЯНСКОЕ ЛИТЕРАТУРНОЕ ДВИЖЕНИЕ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1920-ЫХ ГОДОВ

ДАВИД ГАСПАРЯН

Резюме

В 1920-ые годы армянская литература—один из живых отрядов всесоюзного литературного движения—переживала период бурных программно-теоретических и организационных поисков. Во второй половине двадцатых годов эти поиски обрели новое содержание. В 1925 г. был создан союз пролетарских писателей «Ноембер» («Ноябрь»), которым руководил Е. Чаренц. В союз входили Г. Маари, М. Армен, Г. Сарьян, В. Норенц, С. Таронци и другие. «Ноембер», в противовес другим литературным группировкам, например, Ассоциации пролетарских писателей (куда входили А. Вштуни, Н. Зарьян, В. Алазан, Г. Ванандеци, Н. Дабагян и др.), придерживался более правильной ориентации в вопросах развития литературного процесса, считая, что литература призвана отображать реальную жизнь. «Ноембер» и Ассоциация пролетарских писателей объединились в конце 1926 г. в Союз пролетарских писателей Советской Армении.

В вопросе объединения литературных групп важную роль сыграли дискуссии 1929—1930 гг., направленные против схематизма в литературе. Объединение творческих группировок завершилось в апреле 1932 г. созданием Союза советских писателей Армении.